



*Համարը N 568-Ն
Տիպը Որոշում
Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ 2015.06.10/33(1122) Հոդ.
447*

*Տեսակը Ինկորպորացիա
Կարգավիճակը Գործում է
Ընդունման վայրը Երևան*

*Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն
Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.07.2015*

*Ընդունման ամսաթիվը 27.05.2015
Ստորագրման ամսաթիվը 01.06.2015
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը*

- Կապեր այլ փաստաթղթերի հետ**
- Փոփոխողներ և ինկորպորացիաներ**

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

(որոշումը խմբ. 08.08.19 N 1048-Ն)

27 մայիսի 2015 թվականի N 568-Ն

ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստան Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Հաստատել պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիա կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով շահառուների հաշվառման և հերթագրման կարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թ.
մայիսի 27-ի N 568-Ն որոշում

ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Անպտղության հաղթահարման» բյուջետային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) շրջանապետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով հետազոտությունների և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման հետ կապված ծավալները, շահառուներին և

պահանջները, ընթացակարգերը և դրանց հետ կապված իրավահարաբերությունները:

2. Սույն կարգում «Պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում» և «Պետության կողմից երաշխավորված արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում» հասկացությունները Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 4-ի N 318-Ն որոշմամբ սահմանված իմաստով:

3. Անպտղության բուժման և հաղթահարման նպատակով պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով հետազոտությունների և բուժման, այդ թվում՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ, բժշկական օգնության և սպասարկման ծավալներն են՝

1) անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման նպատակով մինչ արհեստական սերմնավորումն արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշմամբ սահմանված ծավալներով.

3) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում ամուսնու կամ դոնորական սերմով արհեստական սերմնավորման մեթոդով՝ սերմնավորման փորձեր առավելագույնը 6 դաշտանային ցիկլի ընթացքում.

4) արտամարմնային բեղմնավորման իրականացման մեկ փորձ, հավելյալ սաղմերի ստացման դեպքում սաղմերի 2-րդ և տեղադրումներն արգանդի խոռոչ:

(3-րդ կետը փոփ. 05.01.23 N 22-Ն)

4. Արտամարմնային բեղմնավորման երկրորդ փորձն իրականացվում է պետության կողմից երաշխավորված արտոնյալ բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում՝ պետության կողմից 50 տոկոս մասնակցությամբ:

5. Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման յուրաքանչյուր դեպքում, ըստ բժշկական ցուցումների, կարող է տրամադրվել սույն հավելվածի 3-րդ կետով նախատեսված ծավալների ցանկ անհրաժեշտ համակցություն (պատճառագիտության հետազոտում և բուժում, հետազոտություններ՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառումից առաջ, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում):

6. Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և սերմնաբջջիների համար փոխհատուցման ծախսերը:

7. Դոնորական ձվաբջջի և (կամ) դոնորական սերմնաբջջի օգտագործմամբ, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում փոխնակ մոր, սեռաբջջի (սեռաբջջիների) դոնորի (դոնորների) ծախսերը փոխհատուցվում են շահառուի բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի N 64-Լ որոշմամբ սահման շահառուներին:

(7-րդ կետը լրաց. 30.06.22 N 968-Ն)

8. Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով անպտղության պատճառագիտության և բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպվում են համապատասխան լիցենզիա ունեցող բժշկական հաստատությունների կողմից:

9. Անպտղության բուժման և հաղթահարման նպատակային ամենամյա ծրագրի ծառայությունների ֆինանսավորումն իր է Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի N 318-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված է:

2. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

10. Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներով տրամադրվող բժշկական և սպասարկումից օգտվելու իրավունք ունեն

1) 2 տարի և ավելի անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման)՝ Հանրապետության քաղաքացի հանդիսացող անզավակ կանայք, որոնք պատկանում են 20-35 (ներառյալ) տարիքային խմբին՝ հավելվածի 3-րդ և 4-րդ կետով սահմանված ծավալներով, ընդ որում՝ 35 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի շահառուի կարգավիճակը մի տարեկան դառնալը.

2) 36-42 (ներառյալ) տարեկան Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող անզավակ կանայք՝ սույն հավելվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված ծավալներով.

3) սահմանամերձ բնակավայրերի 1 երեխա ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ամուսնությունը գրանցած, 2 տարի և ավելի երկրորդային անպտղություն ունեցող (բացարձակ ցուցումների դեպքում՝ առանց 2 տարվա սահմանափակման) գույզերը, որոնցից կինը պատկանում է 20 (ներառյալ) տարիքային խմբին՝ սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված ծավալներով, ընդ որում՝ 35 տարեկանում հաշվառվելու և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման ցուցումների առկայության դեպքում կինը պահպանում է ծրագրի կարգավիճակը մինչև 38 տարեկան դառնալը.

4) զինվորական ծառայության ընթացքում կամ զինվորական ծառայության ավարտից հետո զինվորական ծառայության 1 պատճառական կապով զոհված (մահացած) որդու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող ծնողները՝ սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետով սահմանված ծավալներով, ընդ որում՝ կնոջ տարիքը սահմանվում է մինչև 42 տարեկանը:

(10-րդ կետը խմբ. 04.06.20 N 875-Ն, փոփ. 25.02.21 N 227-Ն, խմբ. 05.01.23 N 22-Ն)

11. **(կեսն ուժը կորցրել է 05.01.23 N 22-Ն)**

11.1. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված՝ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման օգնության և սպասարկման ծավալներից կարող են օգտվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ից Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթս կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով կամ ծառ պարտականությունները կատարելիս զոհված (մահացած), կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առա կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ կամ մահացած ճանաչված, ինչպես նաև սույն կետում նշված հանգամանքներում ստացած վնասվածքի, իւեղման կամ ձեռք ք հիվանդության հետ պատճառական կապով հետազայում մահացած զավակի ծնողները, սույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետով ծավալներով:

(11.1-ին կետը լրաց. 25.02.21 N 227-Ն, խմբ. 30.06.22 N 968-Ն, փոփ. 05.01.23 N 22-Ն)

3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆԵՐՈՎ ԱՆՊՏՂՈ ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՈՒ ԲՈՒԺՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

12. Անպտղության պատճառագիտության հետազոտման ու բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգի կիրառման կապակցությամբ շահառուն իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ տվյալ տարում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հետ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյա պայմաններով համապատասխան տեսակի ծառայությունների մատուցման պայմանագիր ունեցող կազմակերպությունում (ս կազմակերպություն)՝ իր ընտրությամբ:

13. Կազմակերպությունը բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում ծառայությունները մատուցում է ըստ 1 էլեկտրոնային գրանցման հաջորդականության, սույն որոշման N 2 հավելվածով հաստատված շահառուների հերթագրման կ համապատասխան:

14. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման բժշկական ցուցումների, հակացուցումների, սույն հավ կետով նախատեսված ծավալներին համապատասխան՝ պացիենտին անհրաժեշտ բուժօգնության և վերարտադրողական օժ տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդի (մեթոդների) որոշման, ինչպես նաև սույն հավելվածի 10-րդ և 11.1-ին կետերի պահամ համապատասխանության հարցը քննարկելու և որոշում կայացնելու նպատակով կազմակերպությունում ստեղծվում է հանձն (այսուհետ՝ հանձնաժողով):

(14-րդ կետը փոփ. 05.01.23 N 22-Ն)

15. Հանձնաժողովը բաղկացած է 5 անդամից (բուժհաստատության տնօրեն կամ բուժական գծով տեղակալ, ռեպրոդուկ ծառայության ղեկավար, անպտղության պատճառագիտությամբ զբաղվող երկու մասնագետներ, մասնագիտական աստղիաչ ներկայացուցիչ):

16. Հանձնաժողովի անհատական կազմը հաստատվում է կազմակերպության տնօրենի հրամանով:

17. Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Առաջին նիստի ընթացքում հանձնաժողով անդամներից ընտրվում են հանձնաժողովի նախագահ և քարտուղար: Հանձնաժողովի նիստը վարում է հանձնաժողովի նախ վերջինիս բացակայության դեպքում հանձնաժողովի անդամներից մեկը:

18. Հանձնաժողովը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համար կարող է տալ՝

- 1) դրական եզրակացություն՝ բուժօգնության ծավալների և տեսակների նշումով:
- 2) բացասական եզրակացություն բուժօգնության տրամադրման մերժման հիմքերի նշումով:

19. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են և համարակալվում: Արձանագրությունն ստորագրվում է հանձնաժողով և անդամների կողմից:

20. Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են ըստ դիմումների մուտքագրման փաստի՝ 10-օրյա ժամկետում, անհրաժեշտ դեպքում, ավելի հաճախ:

21. Հանձնաժողովը նիստի անցկացման վայրի և ժամանակի մասին նախապես ծանուցում է շահառուին:

22. Անպտղության պատճառագիտության հետազոտման ու բուժման, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգի կիրառման կապակցությամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնու ր սպասարկում ստանալու նպատակով քաղաքացին (այսուհետ՝ դիմումատուն) ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

- 1) դիմում՝ սույն հավելվածի N 1 ձևին համապատասխան.
- 2) կնոջ, տղամարդու՝ անձնագիր, նույնականացման քարտ.
- 3) սույն հավելվածի 10-րդ և 11.1-ին կետերով նախատեսված պահանջներին համապատասխան՝ դիմումատուի կարգավի հավաստող փաստաթղթեր, իսկ 10-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված բնակավայրերի բնակիչ հանդիսացող շահառու ամուսիններից մեկը՝ նաև տեղեկանք բնակության վայրից՝ մշտապես բնակվելու և տեղեկանք ոստիկանության բնակչության ռեգիստրից՝ մշտական բնակության վայրում առնվազն մեկ տարի հաշվառված լինելու վերաբերյալ, ընդ որում՝ շահառու ա մեկի հաշվառման և մշտական բնակության վայրերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավ 1998 թվականի նոյեմբերի 17-ի N 713 որոշման N 1 հավելվածով սահմանված ցանկին.

4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվելու փաստ

փաստաթուղթը (ամուսնության վկայական)։

5) Էպիկրիզ (բժշկական փաստաթղթեր) նախկինում կիրառված հետազոտման մեթոդների ու վերարտադրողականության տեխնոլոգիաների կիրառման մասին՝ տրված պացիենտի բուժօգնությունն իրականացրած բժշկական հաստատության կամ սպասարկման կանանց կոնսուլտացիայի կողմից (եթե կինը մինչև դիմելը հետազոտվել և (կամ) անպտղության կապակցությամբ բժշկական օգնություն)։ Առաջնակի հետազոտվող անպտղ գույգերի դեպքում բժշկական փաստաթղթեր չեն ներկայացվում **(22-րդ կետը փոփ. 25.02.21 N 227-Ն, խմբ. 05.01.23 N 22-Ն)**

23. Դիմումը մուտքագրվում է էլեկտրոնային առողջապահական համակարգ՝ սույն հավելվածի 22-րդ կետով նախատեսված կից ներկայացվող բոլոր փաստաթղթերի ներկայացման դեպքում։ Նախատեսված փաստաթղթերի թերի լինելու դեպքում դիմ տեղեկացվում է և առաջարկվում է ներկայացնել բացակայող փաստաթղթերը։

24. Հանձնաժողովը շահառուի դիմումը և կից փաստաթղթերն ուսումնասիրում և քննարկում է նիստում մինչև 10 աշխատ օրվա, իսկ լրացուցիչ ուսումնասիրության կարիքի դեպքում՝ մինչև 20 օրացուցային օրվա ընթացքում։

25. Շահառուն իր ցանկությամբ կարող է մասնակցել իր դեպքի հանձնաժողովային քննարկման արդյունքների ամփոփում

26. Հանձնաժողովի կողմից դիմումատուի գործն ուսումնասիրելու արդյունքում տրվում է եզրակացություն՝ սույն հավելվածի համապատասխան։ Դիմումը բավարարելու և ուղեգիր տրամադրելու վերաբերյալ եզրակացության դեպքում նշվում է մատու ծառայությունների ծավալը և տեսակները։

27. Սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ուղեգիրը՝ սույն հավելվածի համապատասխան, տրամադրում է բուժհաստատության հանձնաժողովը՝ կցելով քաղվածք հանձնաժողովի եզրակացություն հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ։

28. Սույն հավելվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետով և 4-րդ կետով նախատեսված դեպքերում՝ որպես նորագույն և թանկարժեք բուժօգնության տեսակ, արտամարմնային բեղմնավորման իրականացման համար ուղեգրումն իրականացվում է Հայաստան Հանրապետության առողջապահության նախարարի հրամանով՝ հաշվի առնելով հանձնաժողովի՝ էլեկտրոնային եղանակով եզրակացությունը։

(28-րդ կետը լրաց. 05.01.23 N 22-Ն)

29. Դիմումի ընթացքը կարող է մերժվել հետևյալ դեպքերում՝

- 1) դիմումատուն չի բավարարում սույն հավելվածի 10-րդ և 11.1-ին կետերով սահմանված պայմաններին.
- 2) առկա են Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի N 214-Ն որոշման 11-րդ և 17-սահմանված վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառման հակացուցումներ.
- 3) սեփական ձվաբջջով արհեստական բեղմնավորման կամ սեփական արգանդում սաղմի ներդրման նպատակահարմար բացակայություն, որի մասնագիտական եզրակացության համար կարող է հիմք հանդիսանալ մեթոդի կիրառման արդյունքում դրական ելքի խիստ ցածր մակարդակը, առաջացնելով դոնորական ձվաբջջի կամ փոխնակ մոր ծառայությունների կիրառման հրաժեշտություն։ Վերջինիս բժշկական պատճառների ցանկը ներառում է՝
 - ա. հակամյուլերային հորմոնի 1 նգ/մլ-ից ցածր մակարդակը, ընդ որում սույն որոշման 11.1.-ին կետով սահմանված շահի խմբի համար հակամյուլերային հորմոնի ստորին սահման է համարվում մինչև 40 տարեկանը՝ 0,6 նգ/մլ, 40-43 տարեկանում տարեկան և ավելի տարիքի դեպքում բեղմնավորումը կատարվում է դոնորական ձվաբջջով,
 - բ. երկու ձվարաններում անտրալ ֆոլիկուլների 5-ից պակաս քանակը,
 - գ. արտամարմնային բեղմնավորման 3 և ավելի անհաջող փորձը,
 - դ. արգանդի ախտաբանություններ՝ բարակ՝ 5 մմ-ից պակաս էնդոմետրիում, հիպոպլազիա՝ 3-4-րդ աստիճանի, արգան գարգացման արատներ։

(29-րդ կետը խմբ. 30.06.22 N 968-Ն, փոփ. 05.01.23 N 22-Ն)

30. Դիմումի մերժման դեպքում դիմումատուն չի գրվելով կրկին դիմելու իրավունքից (մերժման հիմքերի վերացման դեպքում)։

31. Անպտղության բուժման և հաղթահարման նպատակային ամենամյա ծրագրի շրջանակներում բժշկական օգնություն սպասարկում իրականացնող կազմակերպությունն ստացված արդյունքների մասին Հայաստանի Հանրապետության առողջա նախարարություն է ներկայացնում եռամսյակային և տարեկան հաշվետվություն՝ սույն հավելվածի N 4 ձևին համապատասխան։

Դ Ի Մ ՈՒ Մ

ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԶՈՒՅԳԻ ԿՈ՛ՒՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ _____

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՊԱՐՈՆ/ՏԻԿԻՆ _____ -ԻՆ

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐ ԿԻՆԸ _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

ԱՄՈՒՍԻՆԸ _____

(անունը, ազգանունը, հայրանունը)

ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԸ/ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՅՐԸ _____

(քաղաքը/մարզը, ցուղը, փողոցը, տունը/շենքը, բնակարանը)

ԱՆՁԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԻ (ԱՆՁՆԱԳԻՐ ԿԱՄ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏ) ՀԱՄԱՐԸ, ՍԵՐԻԱՆ

ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ _____

Դ Ի Մ ՈՒ Մ

Անպտղության կապակցությամբ խնդրում ենք դիտարկել սույն դիմումը և տրամադրել բժշկական օգնության և սպասարկման ներկայացված տեսակը (տեսակները)՝ ընդգծել/նշել)

1) անպտղության պատճառագիտության հետազոտում ու բուժում.

2) վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում (մինչ արհեստա սերմնավորումը/արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություններ, արհեստական սերմնա արտամարմնային բեղմնավորում՝ ընդգծել/նշել):

(Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների տարատեսակները նշվում են, եթե անպտուղ զույգը նախապես հետա առկա է ռեպրոդուկտոլոգի մասնագիտական եզրակացությունը՝ ցուցված մեթոդի վերաբերյալ/կցվում է դիմումին):

Հայտարարում ենք, որ վերհուշությունում (անամնեզում) չենք ունեցել՝

1) անպտղության պատճառագիտության համալիր հետազոտություն, այդ թվում՝ լսապարսկոպիա և հիստերոսկոպիա.

2) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների՝ արտամարմնային բեղմնավորման 3 և ավելի փորձ:

Խնդրում եմ (ենք) իմ (մեր) բուժօգնության կազմակերպման ժամկետների և հանձնաժողովի նիստի անցկացման վայրի ո մասին ինձ (մեզ) ծանուցել կապի հետևյալ միջոցով -----

Տեղեկացված ենք, որ՝

Պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխ նիկիրառմամբ բժշկական օգնությունը և սպասարկումը չեն ներառում փոխնակ մոր, դոնորական ձվաբջջի և դոնորական սերմն համար դոնորի (դոնորների) ծառայությունների փոխհատուցումը:

ԴԻՄՈՂՆԵՐ

(կնոջ անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

(ամուսնու անունը, ազգանունը, հայրանունը/ստորագրությունը)

_____ 20 թ.

Ե Ջ Ր Ա Կ Ա Յ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ, ՊԱՑԻԵՆՏԻՆ (ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻՆ) ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ՄԵԹՈԴՆԵՐԻ/ՏԵՍԱԿՆԵՐԻ ԵՎ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

(բժշկական կազմակերպության անվանումը)

- 1. Մասնագիտական հանձնաժողովը, մասնակցությամբ հետևյալ մասնագետների (անունները, ազգանունները, հայրանունները)
- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____

5) _____

2. Ուսումնասիրելով և քննարկելով շահառու (շահառուներ)՝

_____ -ի

և _____ դիմումը և կից ներկայացված բժշկական փաստա

ինչպես նաև առկա հետազոտությունների արդյունքները, հանգեց հետևյալ եզրակացության՝

Պացիենտի (ամուսնական գույզի) մոտ ախտորոշվում է _____

1. Պացիենտի (ամուսնական գույզի) անպտղության դեպքի հետագա վարումը՝

1) հիմնավորված է և անպտղության բուժման և (կամ) հաղթահարման համար ցուցված է (են) բուժօգնության և սպասալ հետևյալ ծավալները և վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների տարատեսակները՝

- անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում
- մինչ արհեստական սերմնավորումը կամ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտությ (նշել/ընդգծել)

- արհեստական սերմնավորում՝ ամուսնու սերմով
- արհեստական սերմնավորում՝ դոնորական սերմով (դոնորին փոխհատուցումը՝ շահառուի կողմից)
- արտամարմնային բեղմնավորման մեկ փորձի կիրառում՝ սեփական ձվաբջջով
- արտամարմնային բեղմնավորման մեկ փորձի կիրառում՝ դոնորական ձվաբջջով (դոնորին փոխհատուցումը՝ շահառո
- արտամարմնային բեղմնավորման 2-րդ փորձի կիրառում՝ արտոնյալ պայմաններով (պետության կողմից 50% մասնա
- հավելյալ ստացված սաղմի (սաղմերի) տեղադրում արգանդի խոռոչ:

2) մերժվում է, հետևյալ հիմնավորմամբ՝

ա. առկա է հակացուցում _____

բ. կիրառվելիք մեթոդի արդյունքում սպասվող դրական ելքի խիստ ցածր մակարդակ (նշել պատճառը/պատճառները).

3) այլ նշումներ _____

3. Մենք՝ շահառուներս ծանոթացել ենք մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հետ, տեղեկացված ենք վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ մեթոդների արդյունավետության և հնարավոր ելքերի մասին, ստորագրում ենք (լրացվում է դեպքի ուսումնասիրության արդյունքների ամփոփմանը շահառուի մասնակցության դեպքում).

Կինը _____, Ամուսինը _____

2. Նխտին մասնակից հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները, հայրանունները և ստորագրությունները՝

- 1) _____
- 2) _____
- 3) _____
- 4) _____
- 5) _____

_____ 20 թ.

Ո Ւ Ղ Ե Գ Ի Ր Ն.....

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԲԺՇԿԱԿ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԽՏ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ, ՄԻՆՉ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ Պ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐ

(տրվում է բժշկական կազմակերպության մասնագիտական հանձնաժողովի եզրակացության հիման վրա (եզրակացությունը կցվում է ուղեգրին) և ու օրվանից 60 օրացուցային օրվա ընթացքում)

_____ (բժշկական կազմակերպության անվանումը)

_____ (բժշկական կազմակերպության տնօրենի անունը, հայրանունը, ազգանունը)

Ուղեգրվում է (են)՝
քաղ. _____

(շահառուի (շահառուների) անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)

(բնակության/հաշվառման հասցեն)

Անպտղության կապակցությամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով (ընդգծել/բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հետևյալ ծավալի/տեսակի ծառայություններ ստանալու համար (անհ ծավալը/տեսակը (տեսակները) ընդգծել/նշել)՝

- 1) անպտղության պատճառագիտության ախտորոշում և բուժում.
- 2) մինչ արհեստական սերմնավորումը կամ արտամարմնային բեղմնավորումն իրականացվող պարտադիր հետազոտություն (նշել/ընդգծել).
- 3) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում՝ արհեստական սերմնավորման մեթոդով ամուսնու դնորական սերմով (նշել/ընդգծել).
- 4) վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառում՝ արտամարմնային բեղմնավորման մեթոդով կնոջ դնորական ձվաբջջով (նշել/ընդգծել).
- 5) նախապես ստացված հավելյալ սաղմի (սաղմերի) տեղադրում արգանդի խոռոչ:

Հանձնաժողովի նախագահ

_____ (անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ 20 թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՆՊՏՂՈՒԹՅԱՆ ԲՈՒԺՄԱՆ ԵՎ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԷ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՅԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԻ, ԱՐՁԱՆԱԳՐՎ ՀՂԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԷ (վերնագիրը խմբ. 05.01.23 N 22-Ն)

Բուժօգնության տեսակը	Տարիքը				Որից՝ գոհված/անհետ կորած զինծառայողների շահառու ծնողներ
	20-30 տ.	30-38 տ.	38-42 տ.	42 տ. քարձր	
Անպտղության պատճառագիտության հետազոտություն ու բուժում					
Շահառուների թիվը	թիվ	թիվ	թիվ	թիվ	թիվ
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					
Արհեստական սերմնավորում					
Շահառուների թիվը	թիվ	թիվ	թիվ	թիվ	թիվ
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					
Արտամարմնային բեղմնավորում					
Շահառուների թիվը	թիվ	թիվ	թիվ	թիվ	թիվ
Հղիություն					
Ծննդաբերություն/երեխա					

Բուժհաստատության տնօրեն՝

.....
(ստորագրությունը)

.....
(անունը, ազգանունը)

_____ 20 թ.

(ձևը խմբ. 05.01.23 N 22-Ն)

(հավելվածը խմբ. 04.06.20 N 875-Ն, փոփ., լրաց. 25.02.21 N 227-Ն, լրաց., խմբ. 30.06.22 N 968-Ն, փոփ. լրաց. 05.01.23 N 22-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2015 թ
մայիսի 27-ի N 568-Ն որո

Կ Ա Ր Գ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՅ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԱՆՎՃԱՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺՍ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՍԲ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՀԱ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ՀԵՐԹԱԳՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պետության կողմից երաշխավորված անվճար պայմաններով (այսուհետ՝ պետական շրջանակներում) վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման նպատակով բժշկական կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) կողմից շահառուների դիմումների մուտքագրման և հելընթացակարգերը:

2. Վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար քաղաքացիների դիմումների մուտքագրումը և հերթագրումն իրականացվում է այն բժշկական կազմակերպության կողմից, ով շահառուն՝ ըստ դիմելիության ժամկետի, կենտրոնացված ընթացակարգով, միասնական առողջապահական էլեկտրոնային միջոցով:

3. Պացիենտի հերթագրման գործընթացում բժշկական կազմակերպությունը պացիենտին (անպտուղ գույզին) ապահովում շրջանակներում դեպքի վարման վերաբերյալ անվճար խորհրդատվությամբ:

4. Բժշկական կազմակերպությունում պացիենտի բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ վարվում է էլեկտրոնային գրանցամատյան՝ սույն հավելվածի ձևին համապատասխան:

5. Բոլոր այն դեպքերում, երբ հերթագրված շահառուի պատճառագիտության հետազոտությունների արդյունքում հայտնաբերվում է պատճառաբանված հիմնավորմամբ նշվում են արհեստական սերմնավորման կամ բեղմնավորման կիրառման ցուցումներ՝ ապա տվյալ շահառուն սպասարկվում է առաջնահերթ: Նշվածի վերաբերյալ որոշումը կայացվում է հանձնաժողովի կողմից, ըստ անհրաժեշտության, այլ մասնագետների ներգրավմամբ, ինչի վերաբերյալ կատարվում է գրառում պացիենտի վարման անհատական քարտում:

6. Հաշվառման և բուժօգնության կազմակերպման գործընթացում ապահովվում է հերթագրման շարունակականության և համաձայն որի, կնոջ տարիքը որպես շահառու կամրագրվի դիմելու պահին և նա կմնա շահառու անգամ բյուջետային տարվա փոփոխման դեպքում:

7. Հերթագրված հիվանդներն իրենց բժշկական օգնության ժամկետի մասին պացիենտի (ամուսնական գույզի) ընտրությամբ տեղեկացվում են՝ գրավոր, հեռախոսով կամ դիմումում նշված կապի այլ միջոցներով:

8. Բժշկական կազմակերպությունը բնակչությանն ապահովում է ծրագրի շահառուների դիմումների մուտքագրման և հելընթացակարգի, հանձնաժողովի կազմի, գործունեության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ այն փակցնելով բժշկական կազմակերպության ընդունարանում՝ տեսանելի տեղում:

ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ*

ԱՆՎՃԱՐ ԿԱՍ ԱՐՏՈՆՅԱԼ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՕԺՍՆԴԱԿ ՏԵԽՆՈԼՈԳ ԿԻՐԱՌՄԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ

Անուն- նական զույգերի դիմելու ը/կ	Կնոջ անունը, ազգ- անունը, հայր- անունը	Ամուսնու անունը, ազգ- անունը, հայր- անունը	Բնակության վայրը (մարզ, գյուղ/քաղաք, շենք, բն./տուն)	Գրանցման վայրը (մարզ, գյուղ/ քաղաք, շենք, բն./տուն)	Շահառուի ներկա- յացրած փաստա- թղթերի համապա- տասխա- նությունը սահմանված հիմնական լրացուցիչ պահանջ- ներին (թվարկել հիմքերը)	Դիմումը մերժվել է (նշել պատ- ճառը)	Տրվել է ուղեգիր (նշել համարը)	Անպտղության հետազոտման, բուժման և վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման մասին					Օմ բել (ն կեմ նս այ
								անպտղու- թյան պատճա- ռագիտու- թյան հետա- զոտում և բուժում	մինչ վերար- տադրողա- կանության օժանդակ տեխնո- լոգիաների հետա- զոտում	արհես- տական սերմնա- վորում	արտա- մարմնային բեղմնա- վորման փորձ	հավելյալ ստացված և սառեցրած սաղմի տեղա- դրում	

* Նախատեսված է բժշկական կազմակերպության կողմից դեպքերի գրանցման, հաշվառման և վարման արդյունքում ստ
տվյալների արձանագրման համար: